ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ *

ՀՏԴ 324 *DOI: 10.52063/25792652-2025.1.24-149*

ԼՈՒՍԻՆԵ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
lusine.soghomonyan.92@gmail.com
ORCID: 0009-0003-0343-316X

Հոդվածի նպատակն է ներկայացնել, թե ինչպես է ձևավորվել Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգը Խորհրդային Միության փլուզումից հետո, վերջինիս կայացման գործընթացում ինչպիսի խնդիրներ են հանդիպել. քննարկվել են այն պարտադիր փուլերը, առանց որոնց չեն կարող կայանալ ընտրական գործընթացները:

Հետազոտության նպատակին հասնելու համար մեր առջև խնդիր ենք դրել պարզաբանելու և քննարկելու, թե ինչպիսի բարեփոխումներ են անհրաժեշտ ոլորտի զարգացման և կայունացման համար, ներկայացնելու, թե ինչպիսի մեխանիզմներ և գործիքակազմ են նպաստել ընտրական համակարգի զարգացմանը:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են համեմատական, պատմական, համակարգային և բիհևիորիստական մեթոդները:

Հետազոտության շրջանակներում արված հիմնական եզրահանգումներն այն են, որ ընտրական բարեփոխումները, որոնք սկսվել են դեռևս 1990-ականներից, մի կողմից նպաստել են ընտրությունների ավելի ժողովրդավարական անցկացմանը, սակայն մյուս կողմից շարունակական խնդիրներ են առաջացրել ընտրողների արդար ներկայացվածության հարցում: Այդ իմաստով հարկ է նշել, որ ընտրական գործընթացներում 1990-ականներին բավականին մեծ էր խորհրդային տարիների ազդեցությունը, երբ ընտրողը գիտեր, որ իր ձայնը ոչ մի նշանակություն չունի ընտրության արդյունքների արձանագրման առումով: Այդպիսի մոտեցումները նկատելի են անգամ մեր ժամանակներում: Մյուս առանձնահատկությունը կարելի է համարել այն, որ ընտրողները հիմնականում առաջնորդվում էին ոչ թե ընտրվողների նախընտրական ծրագրերով, որոնք շատ նման էին իրար, այլ խարիզմատիկ լիդերների ազդեցությամբ: Նորամուծություն էր նաև եվրոպական կառույցների խորհրդատվական և մասնակցային գործունեությունը՝ դիտորդների կարգավիճակով: Հարկ է նաև նշել, որ առաջին համապետական ընտրություններից հետո նկատելի էր նաև ընտրակեղծիքների և ընտրողներին կաշառելու դրսևորումները, ինչպես նաև «թաղային հեղինակությունների» ներգրավումը ընտրական գործընթացներին:

* Հոդվածը ներկայացվել է 30.01.2025թ., գրախոսվել՝ 26.02.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2025թ.:

Գլխավոր եզրահանգումն այն է, որ բոլոր ընտրությունները տարբեր են միմյանցից, եթե անգամ վերջիններս անցկացվեն նույն ընտրացուցակներից կազմված կուսակցություններից և թեկնածուներից: Հարկ է նշել, որ բարեփոխումների գործընթացը դեռ չի ավարտվել: Թե՛ նախագահական և թե՛ խորհրդարանական ընտրությունները ցուցաբերել են տարբեր դինամիկա՝ կախված քաղաքական ուժերի դիրքերի փոփոխություններից, հասարակության արժեհամակարգի, մշակութային-արժեքաբանական մի շարք գործոններով պայմանավորված:

Հիմնաբառեր՝ *Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգ, օրենսդրական կայունություն, օրենսդրական փոփոխություններ, միջազգային դիտորդներ, նախընտրական քարոզարշավ, քաղաքական կուսակցություններ, ընտրական հանձնաժողով:*

Ներածություն

Ինչպես յուրաքանչյուր պետությունում, Հայաստանի Հանրապետությունում ևս նշանակալի իրադարձություններ էին ընտրական գործընթացների կայացումն ու զարգացումը: Պետք է նկատել, որ որակական առումով նոր մոտեցման ներդնումը նորանկախ Հայաստանի Հանրապետության համար կարևոր իրադարձություն էր: Ըստ էության, ընտրական գործընթացները՝ որպես քաղաքական համակարգի կարևորագույն ինստիտուտ, ժամանակի հրամայականով օրենսդրական ամրագրումների տեսանկյունից ենթարկվում են տարբեր փոփոխությունների, վերախմբագրումների և շտկումների: Պետության նոր ինստիտուտների ձևավորմանը զուգահեռ տեղի էին ունենում ընտրահամակարգի փոփոխություններ, ինչն, առաջին հերթին, կապված էր Հայաստանի անկախության հռչակագրի և նոր Սահմանադրության ընդունման հետ: 1990թ.-ի օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը ընդունեց Հայաստանի անկախության հռչակագիրը, որը նշում էր, որ ՀԽՍՀ-ն կազմալուծվում է, և ձևավորվում է Հայաստանի Հանրապետությունը: Մեկ տարի անց հայ ժողովուրդը անկախության հանրաքվեի ժամանակ կողմ է քվեարկում ԽՍՀՄ կազմից դուրս գալու պահանջին և 1991թ.-ի սեպտեմբերի 21-ին հռչակվում է Հայաստանի անկախությունը: Ինչպես նոր ձևավորվող ցանկացած պետություն, Հայաստանի Հանրապետությանը ևս պիտի էր կազմավորվեր քաղաքական համակարգի ողջ կառուցվածքով ու ենթակառուցվածքներով: Պետք էր վերաձևավորել պետական մարմինները, ստեղծել կայուն քաղաքական համակարգ, արդիականացնել պետական ենթակառուցվածքները, ուժային կառույցներին նոր շունչ հաղորդել, արդարադատության համակարգը նորացնել՝ ստեղծելով նոր Սահմանադրություն և մի շարք այլ գործոններ, որոնց թվում իր ուրույն տեղն ունեին ընտրական գործընթացները:

Հայաստանի Հանրապետության անկախացման առաջին օրերից իրականացվող հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումն ուղեկցվում էր երկրի կյանքի բազմաթիվ ոլորտներում (տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլն) արժեքների և առաջնահերթությունների վերանայմամբ և վերահաստատմամբ (ինչպես անցումային փուլում գտնվող ցանկացած երկրում): Առանձնակի վերաարժեքավորվում են պետական իշխանության կազմակերպման և իրականացման հիմնախնդիրները, պետական իշխանությունը կրողի՝ իրեն պատկանող իշխանության կազմակերպման և իրացման կառուցակարգերը (Այվազյան 15):

Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգը դիտարկելով միջազգային ընտրական չափորոշիչներին համապատասխան՝ հասկանում ենք, որ կան շատ բացթողումներ: Սակայն դրանց արդիականացման ու բարելավման

գործընթացները մշտապես են գտնվում ուշադրության կենտրոնում, ինչը պայմանավորված է միջազգային վերահսկողական գործիքակազմի ներդրմամբ: Զարգացման այս գործընթացները կհաստատեն ազատ ընտրությունների իրականացումը, սակայն այն պահանջում է քաղաքական կամք և համապատասխան մոտեցում:

«Յուրաքանչյուր պետություն, պահպանելով համընդհանուր ընդունելի սկզբունքները, պետք է ընտրի իր օրենսդրությանը, քաղաքական համակարգին, քաղաքական ուժերի և հասարակության պահանջներին, ժողովրդավարական ավանդույթների մակարդակին, անցած փորձին համապատասխանող և դրանում հայտնաբերված թերությունները շտկելուն ուղղված համապատասխան լուծումներ» (Սմբատյան 41):

Ընտրական օրենսդրության հիմնախնդիրները և կարևորությունը Հայաստանի Հանրապետությունում

Ընտրական օրենսդրությունը ժողովրդավարության գլխավոր բաղադրիչներից է, քանի որ ապահովում է քաղաքացիների՝ ազատ ընտրելու և ընտրվելու իրավունքը, կարևորվում է դրանց արդար և թափանցիկ անցկացմամբ: Ինչպես շատ երկրներում, Հայաստանում ևս այն չի շրջանցում մի շարք մարտահրավերներ և խոչընդոտներ, որոնք մտապես բարեփոխման կարիք ունեն: Ընտրական օրենսդրության հիմնախնդիրներն ու թերությունները դրսևորվում են հետևյալ կերպ. ընտրական գործընթացների արդար, ազատ և թափանցիկ անցկացման մարտահրավերներ, հանրության վստահության բացակայություն, ընտրակեղծիքների առկայություն, նախկին ընտրական օրենսդրության բացասական ազդեցություն, իրական վերահսկողական մեխանիզմների բացակայություն, կուսակցությունների և հասարակության անհրաժեշտ մակարդակի փոխհարաբերությունների բացակայություն: Հարկ է նշել, որ քաղաքացիների ներգրավվածությունը քաղաքական կյանքին կախված է նրանց անհատական վարքագծից, որի վրա մեծ ազդեցություն է թողնում երկրում տիրող իրավիճակը՝ քաղաքական տրամադրվածության և հետաքրքրության շրջանակը: Ի վերջո, հասարակության մեջ յուրաքանչյուրը իր գործունեության միջոցով է ձևավորում քաղաքական մասնակցության միջավայր (Սարգսյան 132):

Ընտրական գործընթացն ու ինստիտուցիոնալ շրջանակը առանցքային դեր են խաղում աշխարհի տարբեր երկրների ժողովրդավարական լանդշաֆտի ձևավորման գործում: Ընտրական համակարգերի ուսումնասիրությունը և դրանց փոխազդեցությունը ավելի լայն ինստիտուցիոնալ միջավայրի հետ առաջնային կաևորություն ունեն քաղաքական գիտության և կառավարման հետազոտությունների ոլորտում: Ընտրությունները՝ որպես ժողովրդավարության հիմնասյուներից մեկը, ծառայում են որպես քաղաքացիների մասնակցության, ներկայացվածության և հաշվետվողականության էական մեխանիզմ: Այնուամենայնիվ, ընտրական համակարգերի արդյունավետությունն ու ամբողջականությունը մեծապես կախված են այն ինստիտուցիոնալ միջավայրից, որտեղ նրանք գործում են (Մուղնեցյան 63):

Հետխորհրդային երկրներում շահառու խմբերի ձևավորման և զարգացման վրա մեծ ազդեցություն են թողել սոցիալ-քաղաքական կտրուկ փոփոխություններն ու քաղաքական ավանդույթները: Խնդիրը կայանում է նրանում, որ այդ երկրներում քաղաքացիական հասարակությունը դեռ կայացման փուլում է, առանձին խմբերի շահերը դեռ հստակ չեն ձևավորվել, և նոր են ստեղծվում կազմակերպչական կառույցները (Մանուկյան 68):

Հետխորհրդային ժամանակահատվածը խորհրդանշվում է առավել էական ընտրական օրենսդրական խոչընդոտների առկայությամբ: Սա բխում էր հատկապես նախկին հասարակարգի արժեհամակարգով, քաղաքական մշակույթի, կառավարման

մոդելի և այլ հատկանիշներով էր պայմանավորված, ինչը, ըստ էության, առավել շատ էր ընդգծում նոր ընտրական օրենսդրության ձևավորման անհրաժեշտությունը: Սա հատկապես պայմանավորված էր նախկին միակուսակցական համակարգով, որը դժվարացնում էր ազատ ընտրական համակարգի ներդնումը:

Օրենսդրության կայունությունն անհրաժեշտ է իրավական որոշակիություն, իրավական կանխատեսելիություն և իրավական անվտանգություն ունենալու և ապահովելու համար: Այս մտահանգումը թույլ է տալիս եզրակացնել, որ օրենսդրության կայունությունը միջոց է ստեղծելու այնպիսի իրավական միջավայր, որտեղ գերակայում է իրավունքը (Ամիրյան 41):

Ընտրական գործընթացների ապահովման հիմնական փուլերը Հայաստանի Հանրապետությունում

Առհասարակ, խոսելով Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգի առանձնահատկությունների մասին, որոնք կոչված են ապահովելու արդար և թափանցիկ ընտրությունների անցկացումը, փաստենք, որ ընտրությունները առանց ներքոնշյալ փուլերի չեն կարող իրականանալ: Դրանք են՝

- **ընտրությունների նախապատրաստական փուլ. ընտրողների գրանցումը,** որն ուշագրավ է **իրավասության** փաստով: Այստեղ կարևոր է հստակեցնել, թե ով կարող է մասնակցել ՀՀ ԱԺ կամ ՏԻՄ ընտրություններին: «1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրության օրը (այսուհետ՝ քվեարկության օրը) Հայաստանի Հանրապետության՝ 18 տարին լրացած քաղաքացիները: 2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում. . . » (ՀՀ ընտրական օրենսգիրք, Հոդված 2. Ընդհանուր ընտրական իրավունքը):
- **ընտրատեղամասերի ձևավորում**. դրանց ձևավորումը պահանջում է հատուկ կարգ, որը կոչված է լինելու ապահովել ընտրական գործընթացների անցկացումը: Ընտրատեղամասի ընտրությունը կախված է լինում տվյալ բնակավայրում ընտրողների քանակից, ինչը պայմանավորում է վերջինիս մեծությունը: Ընտրատարածքը ցանկացած պետության ընտրական համակարգի բաղկացուցիչ էլեմենտներից մեկն է: Ընտրատարածքը իրենից ներկայացնում է որոշակի տարածք, որը կազմավորվում է ՀՀ ԸՕ-ի համաձայն. . . : Ընտրատարածքները կազմավորում և համարակալում է ԿԸՀ-ն (Թովմասյան 215):
- **առաջադրման գործընթաց**. սա կարևոր է թեկնածուների կամ կուսակցությունների համապատասխան փաստաթղթերը ճիշտ ժամանակին ԿԸՀ ներկայացնելու տեսանկյունից: Այս համատեքստում պետք է նշենք այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում այս գործընթացում իրենց մասնակցության հայտն են ներկայացնում բազմաթիվ կուսակցություններ, որոնց թիվը բավականին մեծ է, իսկ արդյունավետության գործակիցը՝ փոքր, ինչը մշտապես քննարկման առարկա է դառնում հատկապես հետընտրական ժամանակահատվածում: Արդի հասարակության քաղաքական համակարգի զարգացման պայմաններում մեծանում է կուսակցությունների դերը կառավարման և որոշումների ընդունման գործընթացում: Կուսակցությունները քաղաքականության կարևոր սուբյեկտներից են, որոնք միջնորդի դեր են ստանձնում պետության և քաղաքացիների միջև: Կուսակցությունները և ընտրական գործընթացները համեմատական քաղաքագիտության հետազոտության կարևոր օբյեկտներից են (Ալեքսանյան 60):
- **նախընտրական քարոզարշավ**. քարոզարշավները կազմակերպվում և անցկացվում են հատուկ կանոնակարգերով: Ընդհանրապես, պետք է փաստենք, որ Հայաստանի Հանրապետությունում քարոզարշավների անցկացումը կարևորագույն

տեղ է զբաղեցնում ընտրական գործընթացներում: Քարոզարշավը արդյունավետ միջոց է՝ ընտրություններից առաջ հանրությանը ներկայացնելու քաղաքական նպատակներն ու տեսլականը: Այն կարգավորվում է ընտրական օրենսդրության համաձայն: Քարոզարշավի մեկնարկի օրը հայտարարում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ արդեն պատրաստ ունենալով առաջադրված կուսակցությունների ցուցակները՝ կազմված թեկնածուների տվյալներից: Նախընտրական քարոզչությունն իրենից ներկայացնում է որոշակի գործունեություն, որը նպատակ ունի խթանելու այս կամ այն թեկնածուին, կուսակցությանը, կուսակցության դաշինքին կողմ կամ դեմ քվեարկելը (Թովմասյան 61):

- **քվեարկություն, հաշվարկ**. Հայաստանի Հանրապետությունում քվեարկությունը կատարվում է ընտրատեղամասերում, ընտրողի անձը հաստատող փաստաթղթով ընտրատեղամաս ներկայանալու դեպքում, ժամը 08:00-ից մինչև 20:00-ն: Քվեների հաշվարկը կատարվում է հրապարակայնորեն, 20:00-ից՝ ընտրատեղամասի փակվելուց հետո: Ընտրությունների արդյունքների մասին հայտարարվում է ԿԸՀ-ի կողմից, որը միաժամանակ հավաքագրում է պաշտոնական տեղեկատվության տրամադրման բոլոր աղբյուրները: Այս գործընթացների պատշաճ անցկացումը երկրում կարող է ապահովել հրապարակային, արդար, ժողովրդավարական և թափանցիկ ընտրություններ: Անհրաժեշտ է նշել, որ հատկապես այստեղ են առաջանում խնդիրները, քանի որ, եթե ընտրողները վստահություն չեն ունենում պաշտոնապես հայտարարված ընտրությունների արդյունքների նկատմամբ, ապա դա լրջագույն վտանգ է ներկայացնում պետության կայունության տեսանկյունից: Հայաստանի Հանրապետությունում ընտրական համակարգի կայացման համատեքստում հույժ կարևոր է նաև շեշտադրում կատարել կուսակցությունների ֆինանսավորման գործունեության թափանցիկության ապահովմանն ուղղված հատուկ օրենսդրական միջավայրի ստեղծման և հաստատման համար, սահմանել իրավական խիստ միջոցներ: Այս ամենն իր հերթին կարևոր է նաև ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից, ինչին կարելի է մի ամբողջ հետազոտություն նվիրել:
- **իրավական շրջանակ**. սա, ներառելով ՀՀ Սահմանադրությունն ու ՀՀ Ընտրական օրենսգիրքը, հանդիսանում է հիմնական փաստաթուղթը՝ սահմանելով ընտրությունների կարգն ու կանոնները, ընտրական իրավունքները՝ քաղաքացիների իրավունքներն ու պարտականություններ ընտրական գործընթացների ժամանակ, ինչպես նաև ընտրվելու և ընտրելու իրավունքը, ընտրական իրավախախտումները, որոնք կարող են պատահել ընտրական գործընթացների ժամանակ, և որոնց համար նախատեսված են համապատասխան օրինական կարգավորումներով պատիժների կիրառում և պատասխանատվության ենթարկելու իրավունքներ, միջազգային նորմեր, չափանիշներ և հանձնարարականներ, որոնք կարող են որակական տեսանկյունից ազդել տեղական/ազգային ընտրական համակարգի վրա: Ընտրախախտումներ տեղի են ունեցել բոլոր ընտրությունների ժամանակ, որոնք, ճիշտ է, չեն եղել նույն քանակով, սակայն չենք կարող փաստել, որ իսպառ բացակայել են ընտրական գործընթացներից:
- **իրազեկում**. ընդհանուր առմամբ ՀՀ ԿԸՀ-ն յուրաքանչյուր ընտրությունից առաջ հանրային իրազեկմանն ուղղված միջոցառումների շրջանակ է պատրաստում, որոնք տարեցտարի ավելի են կատարելագործվում, արդիականանում և ընտրողների ավելի լայն շրջանակների համար հետաքրքիր ու ճանաչելի դառնում: Այս գործընթացն իրականացվում է ուղեցույցների, պաստառների, հայտարարությունների, տեղեկատվական նյութերի, հեռուստահաղորդումների, ՁԼՄ-ների և բոլոր այն հարթակների միջոցով, որոնք հասանելի են հանրությանը:

Ամփոփելով հարկ ենք համարում նաև նշել այն իրողությունը որ Հայաստանում անցկացվող համապետական ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկված

են այդ պահին արտասահմանում գտնվող հանրապետության քաղաքացիները, ինչը, մեր կարծիքով, արդարացի չէ: Դա նույնպես, ինչ-որ չափով իր բացասական ազդեցությունն է թողնում հետընտրական տրամադրությունների վրա:

Միջազգային դիտորդական առաքելության դերը Հայաստանի Հանրապետության ընտրական գործընթացներում

Ինչպես արդեն նշեցինք, 1991թ. -ից հետո նորանկախ Հայաստանի ընտրական համակարգը ԽՍՀՄ-ից ժառանգություն էր ստացել այնպիսի համակարգ, որը ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար պահանջում էր համակարգային փոփոխություններ իրականացնել: Այս փոփոխությունները պետք է տեղի ունենային համապատասխան միջազգային վերահսկողական չափորոշիչներին համապատասխան, ազատ և արդար կերպով: Ընտրական գործընթացներում, ինչպես հայտնի է, կարևոր նշանակություն են ձեռք բերել միջազգային դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները: Սա առանձնակի նշանակալիություն է ձեռք բերել հատկապես վերջին տասնամյակներում: Ըստ էության, դիտորդական առաքելության մասին խոսելիս հարկ է նկատել, որ այն լինում է տեղական և միջազգային: Օրինակ՝ տեղական դիտորդական առաքելություն իրականացնողները հստակ տիրապետում են ամբողջ գործընթացին՝ սկզբից մինչ ավարտ, քանի որ ծանոթ են քաղաքական միջավայրին, տրամադրություններին: Պետք է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունը ընտրական գործընթացների ժամանակահատվածում ակտիվ կերպով աշխատում է միջազգային կազմակերպությունների և կառույցների հետ:

Սահմանադրական կարգի հիմունքների երաշխավորման պատասխանատու գործընթացում առանձնահատուկ դեր ունեն ազատ ընտրությունները. վերջիններս գործնականում ապահովում են հանրային իշխանության մարմինների կազմավորման արդյունավետությունը և իշխանության բնականոն իրավահաջորդությունը, շարունակականությունն ու պետության քաղաքական կայունությունը (Հակոբյան 181-182):

Նշենք, որ հատկապես վերջին տարիներին համագործակցությունն ու այցերը Հայաստանի Հանրապետության հետ ավելի ակտիվ ընթացք են ստացել: Այս ամենն ուղղված է ազատ և արդար ընտրությունների կայացմանն ու անցկացմանը: Սակայն պետք է նշել նաև այն միտումը, որ, որպես կանոն, հատկապես արտասահմանյան դիտորդների գնահատականները գրեթե երբեք օբյեկտիվորեն չեն ներկայացնում ընտրությունների ընթացքը: Դրա համար գոյություն ունեն օբյեկտիվ պատճառներ (օրինակ՝ տեղական իրավիճակի, սովորույթների վատ տեղեկատվություն և այլն), ինչպես նաև, շահագրգիռ, ոչ օբյեկտիվ մոտեցումը:

Ընտրական օրենսգրքի փոփոխությունները հետխորհրդային ժամանակահատվածում

Հետխորհրդային ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը մի շարք փոփոխությունների է ենթարկվել՝ պայմանավորված ժողովրդավարացման գործընթացների, երկրում տեղի ունեցած սոցիալական, տնտեսական և այլ հատկանիշներով պայմանավորված փոփոխություններով: Դրանք տարբեր ժամանակահատվածներում վերանայվել և փոփոխություններ են կրել քաղաքական իրողություններում կրած փոփոխությունների անհրաժեշտության հրամայականով՝ ըստ անհրաժեշտության և առաջնահերթության:

Հարկ է նշել նաև ընտրական գործընթացներում օրենսդրական հաճախակի փոփոխությունների մասին, որը բացի դրական ազդեցությունից, պարունակում է

նաև մեծ մարտահրավերներ՝ ընտրողների հետաքրքրության անկման տեսանկյունից, ինչը վերջիններիս շրջանում կարող է հանգեցնել ընդհուպ մինչև ընտրական գործընթացների արդյունքները չճանաչելուն: Ընտրական օրենսդրության պահպանումը ոչ միայն հենց ընտրություններ կազմակերպելու և անցկացնելու համատեքստում է կարևոր, այլև ավելի լայն դիտանկյունից. այն ուղիղ համեմատական է երկրում քաղաքական կայունության պահպանման տեսանկյունից: Ակնհայտ է, որ ընտրական օրենսդրական փոփոխությունների հաճախակիությունը նաև բնութագրվում է քաղաքականացված լինելով: Սա չափազանց մեծ մարտահրավեր է ընտրությունների ազատ և թափանցիկ անցկացման, օրինականության ոտնահարման, կանխակալ վերաբերմունքի, արդարադատության թուլացման և մի շարք արատավոր երևույթների հաստատման տեսանկյունից: Հայաստանում ընտրական համակարգը հիմնված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և ընտրական օրենսդրության վրա, որը, ինչպես վերը նշեցինք, շարունակաբար ենթարկվում է փոփոխությունների: Այս համատեքստում, հարկ է նկատել, թե ենթադրյալ փոփոխությունները ընտրական օրենսդրության մեջ որքան առաջ են կատարվել: Կարևոր է նկատել, որ այդ փոփոխություններին անմիջապես չպետք է հաջորդեն ընտրությունները, որովհետև 1 ամիս առաջ արված փոփոխությունները չեն կարող բավականաչափ ուսումնասիրված և հանրային տիրույթում լուսաբանված լինել, ուստի՝ դա կարող է կրել արհեստական բնույթ՝ չծառայելով հիմնական նպատակին: Նմանատիպ երևույթները հուշում են նրա մասին, որ այդ փոփոխությունները տեղի են ունենում քաղաքական նպատակներից դրդված, այլ ոչ ընտրական օրենսդրության բարելավման համար:

Եզրահանգումներ

Հոդվածում քննարկվել են ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգի որոշակի առանձնահատկությունների, օրենսդրական կայունության նշանակության, միջազգային դիտորդական առաքելությանն առնչվող մի շարք հարցեր: Ըստ երևույթին, Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացը՝ որպես քաղաքական համակարգը ձևավորող կարևորագույն ինստիտուտ, մեծ նշանակություն է ձեռք բերել նաև ժողովրդավարության ձևավորման և զարգացման տեսանկյունից:

Այսպիսով՝ ամփոփելով «Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգի ձևավորման որոշ առանձնահատկությունները հետխորհրդային ժամանակաշրջանում» վերտառությամբ հոդվածը՝ եզրակացնում ենք, որ հատկապես հետխորհրդային շրջանը լի էր խոշորագույն մարտահրավերներով, ինչի վառ ապացույցն է 1991թ.-ից հետո՝ նորանկախ Հայաստանի Հանրապետությունում կայացած նախագահական ընտրությունները: Այդ ժամանակահատվածը հատկապես նույնացվում է քաղաքական խառնաշփոթի, քաղաքական համակարգում մի շարք խնդիրների հետ: Ուստի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրությունը պետք է մշտապես բարելավվի և արդիականանա՝ ավելի արդյունավետ, հուսալի և կայուն ընտրական համակարգ և ընտրական գործընթացներ ունենալու նպատակով:

Կարող ենք արձանագրել, որ փորձ է արվում Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացները դարձնել ավելի արդիականացված, միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ նպաստելով ավելի արդար, ժողովրդավարական համակարգի ստեղծմանը, որը կհամապատասխանի երկրի զարգացման նպատակներին: Ըստ էության, ընտրական գործընթացների պարբերականությունը ժողովրդավարական հասարակարգի գլխավոր ցուցիչներից է:

Հայաստանի Հանրապետությունում եղել են ընտրական գործընթացներ, որոնք հաճախ իշխանության պահպանման միջոց են եղել: Սա մեծ մարտահրավեր է ժողովրդավարության կայացման ճանապարհին ազատ, արդար, իրավական, թափանցիկ ու օրինակելի ընտրություններ կազմակերպելու տեսանկյունից: Ընտրական համակարգի ընտրությունը պետք է հնարավորինս ապաքաղաքական լինի, որպեսզի չորոշվի այնպիսի գործոններով, որոնք կարող են խաթարել ազատ ընտրությունների կայացմանը: Ընտրական համակարգի ընտրությունը պետք է պայմանավորվի ընտրազանգվածի քաղաքական-իրավական մշակութային, պատմական, տնտեսական և մի շարք այլ առանձնահատկություններով:

Օգտագործված գրականություն

1. Ալեքսանյան, Արուսյակ. «ՀՀ ԱԺ 2007 թ. և 2012 թ. ընտրությունների համեմատական կոռելյացիոն վերլուծություն». *Բանբեր Երևանի համալսարանի.* Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2015 № 3 (18), ԵՊՀ, Երևան, 2015, https://shorturl.at/ySi6S: Վերջին այցը՝ 08.03.2025:
2. Ամիրյան, Կարեն. *Իրավունքի գերակայության ցուցիչ. օրենսդրության կայունությունը.* 2022, http://www.old.ysu.am/files/04K_Amiryan.pdf: Վերջին այցը՝ 11.04.2024:
3. Այվազյան, Նորիկ. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի բարելավման որոշ հարցեր». *Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն*, 143.3, (№ 2), ԵՊՀ, Երևան, 2014:
4. Թովմասյան, Հրայր. *Ընտրական օրենսդրության և ընտրական վարչարարության մասին.* Տիգրան Մեծ, Երևան, 2007:
5. Հակոբյան, Լիանա. *«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք», ՀՀ սահմանադրական օրենքի փոփոխությունների քաղաքական-իրավական նշանակությունը.* Հայպետհրատ., Երևան, 2021:
6. ՀՀ ընտրական օրենսգիրք. *Հոդված 2. Ընդհանուր ընտրական իրավունքը.* https://surl.li/pxikpd: Վերջին այցը՝ 10.10.2024:
7. Մանուկյան, Արմենակ. *Ժամանակակից քաղաքական գործընթացներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ.* ԵՊՀ, Երևան. , 2011:
8. Մուղնեցյան, Տիգրան. «Ընտրական համակարգը Ուկրաինայում և Հայաստանում ժողովրդավարական փոփոխությունների համատեքստում (2005-2019. համեմատական վերլուծություն)», *Գիտական Արցախ*, № 1(20), 2024, Արցախ, Երևան, 2024, https://surl.li/kbnhrd: Վերջին այցը՝ 10.14.2024:
9. Սարգսյան, Առնակ. «Ընտրական գործընթացին մասնակցությունը ժողովրդավարացման իրողություններում (ՀՀ 2018 թ. Ընտրությունների օրինակով)». *«Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես*, N1, ԵՊՀ, Երևան, 2020, https://surl.lu/hemymz: Վերջին այցը՝ 10.03.2024:
10. Սմբատյան, Արմեն. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դերը քաղաքական միավորների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության հարցում», *Օրինականություն*, № 131, Երևան, 2022:

WORKS CITED

1. Aleksanyan Arusyak. HH AJ 2007 t. ev 2012 t. @ntrutyunneri hamematakan korelyacion verlucutyun. Banber Yerevani hamalsarani. Mijazgayin haraberutyunner. Qaxaqagitutyun, [Comparative Correlation Analysis of the Elections to the National Assembly of the Republic of Armenia in 2007 and 2012], 2015 № 3 (18), EPH, Yerevan, 2015. (Available: 08/03/2024) (In Armenian)

2. Amiryan Karen. Iravunqi gerakayutyan tsutsich. Orensdrutyan kayunutyun@ [An Indicator of the Rule of Law. Stability of Legislation]. 2022 http://www.old.ysu.am/files/04K_Amiryan.pdf (Available: 11/04/2024) (In Armenian)

3. Ayvazyan Norik. Hayastani Hanrapetutyan @ntrakan orensgrqi barelavman vorosh hartser. Banber Yerevani hamalsarani. Iravagitutyun [Some Issues on Improving the Electoral Code of the Republic of Armenia]. 143.3, (№ 2), https://shorturl.at/NWlMK (Available: 10/14/2024) (In Armenian)

4. Hakobyan Liana. “Hayastani Hanrapetutyan @ntrakan orensgirq”, HH sahmanadrakan orenqi popoxutyunneri qaxaqakan-iravakan *nshanakutyun@* [“The Electoral Code of the Republic of Armenia”, the Political and Legal Significance of Amendments to the Constitutional Law of the Republic of Armenia] - Haypethrat hrat, Yerevan, 2021. (In Armenian)

5. HH @ntrakan orensgirq, Hodvac 2. @ndhanur @ntrakan iravunq@ [Electoral Code of the Republic of Armenia. Article 2: General suffrage] https://surl.li/pxikpd (Available: 10/10/2024). (In Armenian)

6. Manukyan Armenak. Jamanakakic qaxaqakan gorts@ntacner. Usumnametodakan dzernark [Modern Political Processes. Educational and Methodological Manual] EPH, Yerevan, 2011. (In Armenian)

7. Mughnetsyan Tigran, @ntrakan hamakarg@ Ukrainayum ev Hayastanum joxovrdavarakan popoxutyunneri hamateqstum (2005-2019. Hamematakan verlucutyun) [Electoral System in the Context of Democratic Changes in Ukraine and Armenia (2005-2019. Comparative Analysis)], Gitakan Artsakh, Artakh, Yerevan, 2024. https://surl.li/kbnhrd (Available: 17/04/2025) (In English)

8. Sargsyan Arnak. @ntrakan gorts@ntacin masnakcutyun@ joxovrdavaracman iroxutyunnerum (HH 2018 t.-i @ntrutyunneri orinakov) [Participation in the Electoral Process in the Realities of Democratisation (on the Example of the 2018 Elections in Armenia)] ‘’Patmutyun ev mshakuyt’’ hayagitakan handes, N1, EPH, Yerevan, 2020. https://surl.lu/hemymz (Available: 10/03/2025) (In Armenian)

9. Smbatyan Armen. Kentronakan @ntrakan handznajoxovi der@ qaxaqakan miavorneri finansakan gorcuneutyan nkatmamb verahskoxutyan hartsum. Orinakanutyun [The Role of the Central Election Commission in Monitoring the Financial Activities of Political Entities], № 131, Yerevan, 2022. (In Armenian)

10. Tovmasyan Hrayr. @ntrakan orensdrutyan ev @ntrakan varchararutyan masin [On Electoral Legislation and Election Administration] Tigran-Mets, Yerevan, 2007. (In Armenian)

THE FEATURES OF THE ELECTORAL SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE POST-SOVIET PERIOD

LUSINE SOGHOMONYAN
Yerevan State University, Faculty of International Relations,
Chair of Political Science, Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia

The purpose of the article is to present how the electoral system of the Republic of Armenia was formed after the collapse of the Soviet Union, what challenges were encountered during its establishment, and to discuss the mandatory phases without which electoral processes cannot take place.

To achieve the research goal, we set the task of clarifying and discussing what reforms are necessary for the development and stabilization of the sector, and to present the mechanisms and tools that have contributed to the development of the electoral system.

During the study, comparative, historical, systemic, and behavioral methods were applied.

The research concludes that while the electoral reforms initiated in the 1990s have contributed to a more democratic electoral process, persistent challenges remain regarding the equitable representation of voters. In this regard, it should be noted that in the 1990s, the influence of the Soviet era on the electoral process was quite significant, as individual voters knew that their vote would not matter in determining the election results. Such approaches can still be observed even in modern times. Another characteristic is that voters were mostly guided not by the candidates' pre-election programs, which were very similar to each other, but by the influence of charismatic leaders. Another development was also the advisory and participatory activity of European structures in the form of observers.

It should also be noted that after the first national elections, there were noticeable manifestations of electoral fraud and voter bribery, as well as the involvement of "neighborhood authorities" in the electoral process.

The main conclusion is that each election exhibits distinct characteristics, even when conducted by the same political parties and candidates from identical voter lists. Notably, the electoral reform process remains ongoing. Both presidential and parliamentary elections have demonstrated varying dynamics, shaped by shifts in the alignment of political forces, transformations in societal value systems, and a range of cultural and ideological influences.

Keywords: *Electoral system of the Republic of Armenia, legislative stability, legislative changes, international observers, pre-election campaign, political parties, Electoral commission.*

ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ ИЗБИРАТЕЛЬНОЙ СИСТЕМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В ПОСТСОВЕТСКИЙ ПЕРИОД

ЛУСИНЕ СОГОМОНЯН
аспирант кафедры политической науки
факультета международных отношений
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения

Цель статьи — представить, как сформировалась избирательная система Республики Армения после распада Советского Союза, какие проблемы возникли в процессе её становления, а также рассмотреть обязательные этапы, без которых избирательные процессы не могут состояться.
Для достижения цели исследования поставлена задача уточнить и обсудить, какие реформы необходимы для развития и стабилизации данной сферы, а также представить, какие механизмы и инструменты способствовали развитию избирательной системы.

Основные выводы исследования заключаются в том, что избирательные реформы, начавшиеся в 1990-х годах, с одной стороны, способствовали более демократическому проведению выборов, с другой стороны, возникли проблемы, связанные с достоверным представлением числа избирателей. В этом контексте

стоит отметить, что в 1990-е годы влияние советской эпохи на избирательный процесс было сильным, так как отдельные избиратели знали, что их голос не будет иметь значения при определении результатов выборов. Подобные подходы наблюдаются и в наши дни. Еще одной особенностью было то, что избиратели часто ориентировались не на предвыборные программы кандидатов, которые были очень похожи, а на личностное влияние харизматичных лидеров. Новым фактором была консультативная и партнерская деятельность европейских структур в качестве наблюдателей.

Следует отметить, что после первых национальных выборов стали очевидными проявления фальсификаций выборов, подкупов избирателей, а также вовлечение «местных властей» в избирательный процесс.

Основной вывод данного исследования заключается в том, что каждые выборы отличаются друг от друга, даже если они проводятся одними и теми же партиями и кандидатами из одних и тех же избирательных списков. Следует подчеркнуть, что процесс реформирования этой сферы еще продолжается. Как президентские, так и парламентские выборы показали различные динамики, обусловленные изменениями в позициях политических сил, системе ценностей общества и рядом культурных и идеологических факторов.

В ходе исследования были использованы сравнительный, исторический, системный и поведенческий методы.

Ключевые слова: *избирательная система Республики Армения, законодательная стабильность, законодательные изменения, международные наблюдатели, предвыборная кампания, политические партии, избирательная комиссия.*